


Ավելացված արժեքի հարկի հետվերադարձը որպես ներառականության աճի և անկանխիկ գործարքների արդյունավետության բարձրացման գործոն[†]

Մարգարյան Անդրանիկ Ա.

Կիրառական տնտեսագիտության ամբիոնի ասպիրանտ, Տնտեսագիտական ֆակուլտետ,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0000-0002-3692-3259>

andranik.margaryan@asue.am

ՀՏԳ՝ 334; 338; EDN: XIXRWS; JEL: H20; H22; H71; H72

DOI: 10.58587/18292437-2025.2-212

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ ավելացված արժեքի հետվերադարձ, անկանխիկ գործարք, քարտային վճարում, հետվերադարձի սահմանաչափ, ֆիսկալ ազդեցություն

Возврат налога на добавленную стоимость как фактор сокращения теневой экономики и повышения эффективности безналичных транзакций

Маргарян Андраник А.

аспирант кафедры прикладной экономики экономического факультета,
Армянский государственный экономический университет (Ереван, РА)

Аннотация. Цель статьи - обсудить проблемы возмещения налога на добавленную стоимость с использованием определенных механизмов, связанных с повышением эффективности безналичных операций в экономике РА. В статье подробно рассмотрен международный опыт по данному вопросу, выделены его лучшие элементы, сделана попытка предложить определенные варианты их локализации. В рамках исследования автор разработал инструмент моделирования для сценарного анализа, с помощью которого оценил возможные фискальные эффекты от возмещения НДС по безналичным операциям с определенной долей в государственном бюджете Республики Армения. В рамках данного анализа были разработаны определенные лимиты и параметры возмещения НДС, применение которых позволит свести к нулю чистые фискальные эффекты для бюджета.

Ключевые слова и словосочетания: возврат добавленной стоимости, безналичная операция, оплата картой, лимит возврата, фискальные последствия

Refund of value added tax as a factor in reducing the shadow economy and increasing the efficiency of non-cash transactions

Margaryan Andranik A.

Postgraduate student of the Department of Applied Economics, Faculty of Economics,
Armenian State University of Economics (Yerevan, RA)

Abstract. The aim of the article is to discuss the issues of VAT refunds with certain mechanisms related to increasing the efficiency of non-cash transactions in the conditions of the RA economy. The article discusses in detail the international experience related to the issue, identifies their best elements, and attempts are made to propose certain options for their localization. The author has developed a scenario analysis simulation tool within the framework of the research, through which he has assessed the possible fiscal impacts of VAT refunds with a certain share from non-cash transactions on the RA state budget. Within the framework of this analysis, certain limits and parameters of VAT refunds have been developed, the application of which will allow to zero out the net fiscal impacts on the budget.

Keywords and phrases: value added tax refund, cashless transaction, card payment, refund limit, fiscal impact

[†] Հետազոտությունը իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 23AA-5B025 ծածկագրով թեմայի շրջանակներում:

Ներածություն: Եկամուտների ստվերային շրջանառությունները տարբեր ճանապարհներով ու մեխանիզմներով հարկերի վճարումներից խուսափելու հետևանքով տարածված երևույթ է ողջ աշխարհում: Իսնդիրը այս կամ այն երկրում դրանց տարածման չափերի մեջ է՝ կախված նրանից, թե ինչպիսին է երկրի զարգացման մակարդակը, հարկահպատակության ի՞նչ ավանդույթներ ու սովորույթներ կան տվյալ երկրում: Ժամանակակից թվային տեխնոլոգիաների զարգացումը, վճարային ու հաշվարկային տարբեր ցանցային հարթակների ու տեխնոլոգիաների օգտագործումը հնարավորություններ են ստեղծել որոշակիորեն մեղմել ու սահմանափակել վերոնշյալ երևույթների ազդեցությունները: Իսնդրի լուծումը, մի կողմից, հանգում է գնորդների մոտ անկանխիկ վճարումների համակարգի հնարավորինս լայն օգտագործման հարցում շահագրգռությունների մեծացման համար ինստիտուցիոնալ և տեխնիկական հիմքերի ստեղծմանը, մյուս կողմից, վաճառողների մոտ հարկային պարտավորությունների կատարման հարցում առավել ադեկվատ վարքագծային մշակույթի ձևավորմանը: Մույն հոդվածում ուսումնասիրվել է ՀՀ-ում ԱԱՀ հետվերադարձի ներդրման պայմանները, կիրառության հնարավոր մեխանիզմները, ինչպես նաև պետական բյուջեի վրա հնարավոր ֆիսկալ ազդեցությունները:

Գրականության ակնարկ: Թվային տեխնոլոգիաների միջոցով անկանխիկ շրջանառությունների ավելացումը և կանխիկի հետվերադարձի մեխանիզմի գործադրումը լայնորեն ներկայացված է տնտեսագիտական վերլուծություններում: Որոշ հետազոտողներ (Չեն և մյուսներ, 2022) այս առումով այն կարծիքին են, որ էլեկտրոնային ցանցերով ավելացված արժեքի հետվերադարձի մեխանիզմի օգտագործումը գնորդների մոտ ոչ միայն բարձրացնում է անկանխիկ ձևով վճարումների շահագրգռվածությունը, այլև հավելյալ խթան է գործարքների արդյունավետության աճի համար [1]: Մեկ այլ տեսակետի համաձայն (Հոնգ, Օահ, 2017) ցանցային գործիքներով վճարումների նոր սխեմաների օգտագործումը նպաստում է գործարքների թափանցիկությանը և ավելացված արժեքի գծով տեղեկությունների կուտակմանը և շահա-

ռուներին փոխանցմանը [2]: Ավելացված արժեքի հետվերադարձի խնդիրը, այս տեսակետից առավել արդիական է զարգացող շուկաներ ունեցող տնտեսությունների համար, մյուս կողմից որոշ հետազոտողներ (օր. Մարիուս Օրդ), նշում են, որ ԱԱՀ-ի հետվերադարձը ժամանակակից թվային տեխնոլոգիաների կիրառման պայմաններում զգալիորեն հեշտանում է, մինչդեռ զարգացած երկրներում հնարավոր է լինում ավելի մեծ ծավալներով վերադարձնել ավելացված արժեքի հարկը: Դիտարկումները ցույց են տալիս, որ օրինակ Եվրոպական միությունում վճարված յուրաքանչյուր Եվրոյից 35 ցենտը ետ է վերադարձվում [3]: Ըստ մի շարք դիտարկումների (Վ.Մազարովա, 2020)՝ զարգացած ֆինանսական ինստիտուտներ ունեցող երկրներում թվային վճարումների հետագծելիությունը ինչ-որ տեղ կարող է խթանել վաճառքները, քանի որ կանխիկ գործարքների պարագայում բավականին մեծ է ինֆորմացիոն ասիմետրիայի ազդեցությունը և բարձր է որոնման ու բացահայտման հետ կապված տրանսկացիոն ծախսերի մակարդակը [4]:

Միջազգային փորձի և հայաստանյան իրողությունների վերլուծություն: Անկանխիկ գործառնությունների խթանումը տարբեր երկրների կառավարությունների օրակարգում է, հատկապես՝ կորոնավիրուսի համավարակից հետո: Հարկաբյուջետային քաղաքականության տեսանկյունից, կախված կիրառվող գործիքակազմից և նպատակներից, վերոնշյալը կարող է ազդել մի քանի ուղղություններով: Ասվածն առաջին հերթին վերաբերում է ստվերային շրջանառությունների երևակմանը և դրանից ածանցված նաև հարկային ճեղքի կրճատմանը: Չուգահեռաբար, նպատակներ կարող են հանդիսանալ նաև վերաբաշխողական և սոցիալական քաղաքականության առավել թիրախային միջոցառումների ձևավորումը, փոքր բիզնեսի աջակցություն, ազգային վճարահաշվարկային համակարգի խթանում, հետզհետե ժամային վերականգնմանն աջակցություն և այլն: Այս ամենի վերաբերյալ առավել համակարգված պատկերացում է տալիս միջազգային փորձի վերլուծությունը և ուսումնասիրված երկրների փորձն ամփոփված է Աղյուսակ 1-ում:


Աղյուսակ 1. Անկանխիկ շրջանառությունը խթանող գործիքակազմի կիրառման միջազգային փորձը

Իտալիա	Բոլոր քաղաքացիները, որոնք կատարում են 50 անկանխիկ գործարք 6 ամսվա ընթացքում ստանում են հետվերադարձ՝ կատարված գործարքների 10%-ի չափով, որը չի կարող գերազանցել 150 եվրոն [5]:
Հունաստան	Հունաստանը նախատեսում է եկամտային հարկի բազայի նվազեցման հնարավորություն անկանխիկ կատարված գործարքների վրա ծախսված եկամտի համապատասխանաբար. <ul style="list-style-type: none"> ➤ 10% - 10.000 եվրոն չգերազանցող եկամտի ծախսման պարագայում, ➤ 15% - 10.000-30.000 եվրոյի միջակայքում ծախսված եկամտի պարագայում, ➤ 20% - 30.000 եվրո և ավել եկամտի ծախսման պարագայում, սակայն նվազեցվող չափը չի կարող գերազանցել 30.000 եվրոն [5]:

Հնդկաստան	Հնդկաստանի վճարումների ազգային կորպորացիայի կողմից ստեղծված BHIM թվային հավելվածով վճարումներ կատարելը նախատեսում է սպառման հարկի (20%) հետվերադարձ, որը ենթադրում է նաև յուրաքանչյուր գործարքի մասով 100 ռուբլի հետվերադարձի առավելագույն սահմանաչափի [6]:
Ճապոնիա	2019 թ.-ին սպառման հարկի 2 տոկոսային կետով բարձրացմանը զուգահեռ, Կառավարությունը նախաձեռնել էր փոքր բիզնեսից անկանխիկ գնումների պարագայում 5% հետվերադարձի սահմանում, որը գործել է մինչ 2020թ.-ի հունիս [7]:
Հոնգ Կոնգ	Թվային հավելվածների միջոցով վճարումները խթանելու նպատակով 2021 թ.-ին Հոնգ Կոնգի կառավարությունը մեկնարկել է 36 մլրդ հոնգկոնգյան դոլար բյուջեով ծրագիր, որի շրջանակներում 4 ամենախոշոր թվային վճարումներ մատուցող օպերատորների միջոցով ծրագրի շահառուներին տրամադրվել են սպառման վաուչերներ՝ յուրաքանչյուրը 5000 հոնգկոնգյան դոլար արժողությամբ [8]:
Մալազիա	Հետքովիդային շրջանում Մալազիայի կառավարությունը շուրջ 15 միլիոն շահառուների հնարավորություն է տվել ընտրել 3 ամենախոշոր թվային վճարումների օպերատորներից մեկի ծառայությունները և վերոնշյալի միջոցով ստանալ 30 մալազիական ռինգգիտ մեկանգամյա դրամական վճար, որը քաղաքացիները կարող էին օգտագործել տվյալ հավելվածով հասանելի սպառման առարկաների ձեռքբերման նպատակով [9]:
Հարավային Կորեա	Համավարակի սոցիալ-տնտեսական ազդեցությունները մեղմելու նպատակով Կառավարությունը 2021 թ.-ի տարեվերջին իրականացրել է երկամսյա ծրագիր, որը հանրավորություն է տվել քաղաքացիներին ստանալ ամսական 10%՝ մինչև 100.000 վոն (85 ԱՄՆ դոլար) հետվերադարձ, եթե նրանց քարտային ծախսերը գերազանցել են երկրորդ եռամսյակում գրանցված ամսական միջինը 3 տոկոսով [10]:
Ավստրալիա	Որոշ երկրների պարագայում թվային տեխնոլոգիաները ծառայել են որպես ոլորտային աջակցության պիլոտային ծրագրերն առավել թիրախային դարձնելու միջոց: Մասնավորապես՝ Աստիալիայում՝ Նոր Հարավային Ուելսի կառավարությունը հեքովիդային ժամանակահատվածում ռեստորանային ոլորտի վերականգնմանն աջակցելու և անկանխիկ շրջանառությունը խթանելու նպատակով նախաձեռնել է "Dine & Discover NSW" ծրագրի շրջանակներում սպառման էլեկտրոնային վաուչերների տրամադրումը՝ յուրաքանչյուր չափահաս ռեզիդենտի հաշվով 4 վաուչեր յուրաքանչյուրը 25 դոլար արժողությամբ [11]:

Անկանխիկ գործառնությունների խթանման միջազգային փորձը հուշում է, որ դրանք առավելապես որոշակի ժամկետայնություն ունեցող, մեկ անհատին ընկնող վերադարձի առավելագույն չափով սահմանափակված և հասցեական նպատակ հետապնդող միջոցառումներ են: Այնուամենայնիվ, կարելի է փաստել, որ նմանատիպ միջոցառումները լրացուցիչ խթան են սպառման

վարքագծային փոփոխությունների զենեքացման ու ստվերային տնտեսության կրճատման համատեքստում և այս առումով կարևոր է անդրադառնալ ՀՀ-ում անկանխիկ գործառնությունների ներկայիս միտումներին և միջազգային փորձի տեղայնացման հնարավորություններին:




Պժայտակեր 1. POS տերմինալով կատարված գործառնությունների շարժը և դրա համադրումը մանրածախ առևտրի ու հարկման բազայի միտումների հետ, 2019-2023թթ¹

¹ Պժայտակերը կազմվել է ՀՀ ԿԲ տեղեկագրերում գետեղված, ՎԿ և ՊԵԿ տվյալների բազայի հիման վրա [16; 17; 18]:

Գծապատկերից կարելի է նկատել, որ վերջին տարիներին զգալիորեն ընդլայնվել է անկանխիկ գործառնությունների դերը տնտեսական գործարքների սպասարկման մեջ: Այսպես, եթե 2019 թ.-ին POS տերմինալով գործառնությունների և գործառնությունների գնահատված

բազայի (Գործառնությունների հարկման բազան գնահատվել է ԱԱՀ և շրջանառության հարկի փաստացի մեծությունը հարաբերելով հարկման դրույքաչափին) ծավալների հարաբերակցությունը 14% էր, 2023 թ.-ին այն հասել է շուրջ 29%-ի:



Գծապատկեր 2. ՀՎՄ-ներով կատարված գործառնությունների շարժընթացը և դրա համադրումը մանրածախ առևտրի միումների հետ, 2023թ.-ի դրությամբ

Գծապատկերը կազմվել է ՀՀ ՊԵԿ տվյալների բազայի հիման վրա [18]:

ՀՀ ՊԵԿ տվյալների համաձայն՝ ՀՎՄ-ներով կատարված շուրջ 2.7 տրիլիոն դրամ ընդհանուր գործարքներից մոտ 23 տոկոսը կատարվել է անկանխիկ եղանակով, որոնց գրեթե 50%-ը՝ ծավալային արտահայտությամբ կենտրոնացած են 20.000 դրամ և ցածր գործարքների խմբում: Հատկանշական է, որ այս խմբերում անկանխիկ գործառնությունների կշիռը հարաբերականորեն ավելի ցածր է համեմատաբար բարձրարժեք գործարքների խմբերում առկա կշռից:

Հաշվի առնելով ՀՀ-ում անկանխիկ գործառնությունների շարունակական աճի տեմպը, ինչպես նաև անկանխիկ գործառնություններից հետվերադարձի նախատեսման շնորհիվ հարկային ճեղքի կրճատման ու թիրախային վերաբաշխողական քաղաքականության իրականացման հնարավորությունները՝ սույն հետազոտության շրջանակներում մշակվել է սիմուլյացիոն գործիք և իրականացվել սցենարային վերլուծություն՝ նպատակ հետապնդելով պարզել

անկանխիկ գործառնություններից որոշակի մասնաբաժնով ԱԱՀ հետվերադարձի հնարավոր ֆիսկալ ազդեցությունները պետական բյուջեի, մասնավորապես՝ ավելացված արժեքի հարկի կորուստների տեսանկյունից: Չուգահեռաբար, խնդիր է դրվել հաշվարկել հետվերադարձի որոշակի սահմանաչափեր և պարամետրեր, որը հնարավորություն կտա գրոյացնել բյուջետային գուտ ֆիսկալ ազդեցությունները: Խնդրադրմանը համահունչ, սիմուլյացիոն վերլուծության համատեքստում դիտարկվել են մի շարք ելակետային նախապայմաններ և ենթադրություններ: Մասնավորապես՝

➤ Սցենարային վերլուծություններում որպես անկանխիկ գործարքներից հետվերադարձի հիմնական գործիք դիտարկվել է 4% դրույքաչափով ԱԱՀ հետվերադարձի մեխանիզմը և անձի հաշվով՝ նվազագույն սպառողական զանբյուրդին համահունչ 75.000 դրամի չափով սպառման առավելագույն շեմային մեծությունը

[12, էջ 324]: Այսինքն այս պարագայում հետվերադարձի առավելագույն չափը կկազմի 3000 դրամ: Սույն մոտեցումը հնարավորություն կտա թիրախավորել ստորին եկամտային և սպառման մակարդակ ունեցող խմբերում ընդգրկված անհատներին, մասնավորապես՝ նվազեցնելով տվյալ խմբերի պարագայում ԱԱՀ արդյունավետ դրույքաչափը ավելի մեծ չափով, քան սպառման ավելի մեծ ծավալ ունեցող և վերին եկամտային խմբերում ընդգրկված անհատների պարագայում: Չուզահեռաբար, հետվերադարձի տվյալ մեծությունը ավելի մեծ կշիռ ունի ստորին եկամտային և սպառման մակարդակ ունեցող խմբերի եկամտունեքում քան առավել բարձրերի պարագայում: Այսինքն այս մեխանիզմը որոշակի պրոգրեսիվություն և ներառականության տարրեր է հաղորդում իր բնույթով ռեգրեսիվ ԱԱՀ-ին:

➤ Սույն միջոցառման արդյունքում ենթադրվում է անկանխիկ շրջանառության կշռի աճ, սակայն գործնականում այն 100% կազմել չի կարող: Հաշվի առնելով, որ համաշխարհային ցուցանիշը անկանխիկ վճարումների 86% է, իսկ զարգացած երկրներում (նաև որոշ՝ զարգացման տեսանկյունից ուղենշային երկրներում, օրինակ՝ Մինգապուր, Հարավային Կորեա, Չինաստան, Նոր Չելանդիա) հաճախ գերազանցում է 90%-ը, որպես անկանխիկ գործառնությունների ընդհանուրում կշռի ցուցանիշ է ընտրվել 90%-ը [13, էջ 51]:

➤ Հաշվի է առնվել նաև հետվճարի տրամադրման արդյունքում ԱԱՀ ճեղքի նվազման հնարավոր էֆեկտը: Այս համատեքստում դիտարկվել են 4 սցենարներ՝ հարկային ճեղքի կրճատման 0%, 10%, 20%, 30%:

➤ Որպես հետվերադարձից պոտենցիալ շահառուներ դիտարկվել են 15-62 տարեկան սպառողները և կենսաթոշակառուները (ենթադրաբար՝ քարտապաններ)՝ շուրջ 2.4 մլն մարդ (ընդհանուր բնակչությունից՝ 2.9 մլն մարդ, նվազեցվել է մինչև 14 տարեկան բնակչության թվաքանակնա՝ 556 հզ մարդ) [14], որոնց թիվը ճշտորոշվել է ԱԱՀ հարկային ճեղքի բազայի՝ ԱԱՀ պոտենցիալ բազային հարաբերակցության

կշռով՝ 35%, այն ենթադրությամբ, որ վերոնշյալ ծավալով սպառողներ գտնվում են անկանխիկի դաշտից դուրս և չեն կարող դիտարկվել որպես քարտապան: Սոցիալապես խոցելի խավերից զատ բնակչության այլ խմբերին (գրեթե ամբողջ բնակչությանը) սույն միջոցառման շրջանակներում ներառելը պայմանավորված է տվյալ գործիքի լայն մասսայականության միջոցով անկանխիկ գործառնությունների խթանման և դրանով իսկ ստվերային շրջանառության կրճատման խնդրադրմամբ:

➤ Վերոնշյալ կշիռը (35%) հարկային ճեղքի նվազմանը զուգահեռ սցենարներում ճշտորոշվել է դեպի ներքև, ինչը հնարավորություն է տվել հաշվի առնել հարկային ճեղքի կրճատման արդյունքում քարտապանների թվի հնարավոր ավելացումը:

➤ Դիտարկվել են նաև լրացուցիչ հարկման կամ հարկի կրճատման մակրոտնտեսական էֆեկտները՝ սպառման հետևաբար նաև երկրորդային էֆեկտով լրացուցիչ հարկերի գեներացման տեսանկյունից: Ընդ որում, հաշվի առնելով, որ հետվճարի ազդեցությունը զգալու են տնտեսվարողների մի խումբ (որոնք հասանելիություն ունեն բանկային ծառայություններին), մինչդեռ հարկի բարձրացումը վերաբերելու է բոլորին, դիտարկվել են ազդեցության երկու մուլտիպլիկատորներ՝ համապատասխան երկու խմբերի համար [15, էջեր 17-22]: Իհարկե, ստորև ներկայացված սցենարում չի դիտարկվել հարկային դրույքաչափի աճի հնարավոր սցենարը, սակայն հարկային ճեղքի կրճատումը դիտարկվել է, որպես հավելյալ հարկազանձում, քանի որ ստվերի երևակումը առաջացնում է հարկային պարտավորություն, հետևաբար՝ վարքագծային տեսանկյունից այն անպայմանորեն իր ազդեցությունն է ունենում սպառողի վարքագծի վրա:

➤ Տվյալ գործիքը հնարավորություն է տալիս հաշվարկել նաև ԱԱՀ դրույքաչափի բարձրացման հնարավոր ֆիսկալ գուտ ազդեցությունը, սակայն սույն հետազոտության շրջանակներում տվյալ տարբերակը չի դիտարկվել:

Աղյուսակ 2. Հետվճարի ներդրման հնարավոր ազդեցությունների սխեմայից հրոն վերլուծություն¹

	Բանաձև	Սցենար 1	Սցենար 2	Սցենար 3	Սցենար 4
ԱԱՀ փաստացի բազա (2023, մլրդ դրամ)*	1.1	3835.9	3835.9	3835.9	3835.9
ԱԱՀ պոտենցիալ բազա (2023, մլրդ դրամ)**	1.2	5905.3	5905.3	5905.3	5905.3

¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի հաշվարկների հիման վրա:

* ԱԱՀ փաստացի բազան հաշվարկվել է 2023թ. -ի ԱԱՀ փաստացի մեծությունը՝ 767.2 մլրդ դրամ, հարաբերելով հարկման օրենսդրական դրույքաչափին՝ 20% [18]:

** ԱԱՀ պարագայում որպես հարկման բազայի մոտարկման մոտեցում դիտարկվել է հետևյալ տարբերակը: Որպես ԱԱՀ մոտարկված հարկման բազա դիտարկվել է տնտեսության ավելացված արժեքը և վերոհիշյալից

Հետվերադարձից պոտենցիալ օգտվողների քանակ (քարտային ծածկույթի 100% մակարդակում, մին մարդ)	2	2.4	2.4	2.4	2.4
Հետվերադարձից պոտենցիալ օգտվողների քանակ՝ հարկային ճեղքի նվազմանը համահունչ, ներառյալ վարքագծային էֆեկտները (մին մարդ)	$3=2*(100\%-12.2)$	1.6	1.7	1.8	1.8
Հետվերադարձի սահմանաչափ	4	75000	75000	75000	75000
Հետվերադարձի դրույթաչափ	5	4%	4%	4%	4%
ԱԱՀ դրույթաչափի աճ	6	0%	0%	0%	0%
Անկանխիկ կշիռ	7	90%	90%	90%	90%
ԱԱՀ հիպոթետիկ աճ դրույթաչափի բարձրացումից (մյուս դրամ)	$8=1.1*6$	0.0	0.0	0.0	0.0
ԱԱՀ հիպոթետիկ կորուստ հետվերադարձից (մյուս դրամ)	$9=2*4*5*7*(12 \text{ ամիս})$	78.9	78.9	78.9	78.9
Չուտ ֆիսկալ էֆեկտ առանց վարքագծային էֆեկտների (մյուս դրամ)	$10=8-9$	-78.9	-78.9	-78.9	-78.9
ԱԱՀ հարկային ճեղք (մյուս դրամ)	$11=1.2*20\%-1.1*20\%$	413.9	413.9	413.9	413.9
Հարկային ճեղքի բազայի կշիռ պոտենցիալ հարկային բազայի նկատմամբ	$12.1=(1.2-1.1)/1.2$	35.0%	35.0%	35.0%	35.0%
ԱԱՀ հարկային ճեղքի բազայի կշիռ պոտենցիալ հարկային բազայի նկատմամբ (ստվերի փոփոխմանը համահունչ)	$12.2=(1.2-1.1)*13/1.2$	35.0%	31.5%	28.0%	24.5%
ԱԱՀ հարկային ճեղքի կրճատում ԱԱՀ վերադարձից (ենթադրություն)	13	0%	10%	20%	30%
ԱԱՀ վերադարձի արդյունքում հարկային ճեղքի կրճատում	$14=11*13$	0.0	41.4	82.8	124.2
ԱԱՀ հիպոթետիկ կորուստ հետվերադարձից (մյուս դրամ)	$15=3*4*5*7*(12 \text{ ամիս})$	51.3	54.0	56.8	59.6
Չուտ ֆիսկալ էֆեկտ ներառյալ վարքագծային էֆեկտները (մյուս դրամ)	$16=8-15$	-51.3	-54.0	-56.8	-59.6
Սպառման փոփոխություն հետվերադարձի էֆեկտի հաշվին	$17=50\%*a*8+50\%*b*8+b*14+16*a$	26.2	8.5	-9.1	-26.7
Հարկերի աճ սպառման աճից	$16=17*(20\%+11/2)$	4.7	1.5	-1.6	-4.8
Չուտ ֆիսկալ էֆեկտ ներառյալ վարքագծային ազդեցությունները և ստվերի կրճատումը (մյուս դրամ)	$17=10+14+16$	-46.6	-11.1	24.3	59.8
Ֆինանսական շուկային հասանելիություն ունեցող տնային տնտեսությունների սպառման մուլտիպլիկատոր	a	-0.51			
Ֆինանսական շուկային հասանելիություն չունեցող տնային տնտեսությունների սպառման մուլտիպլիկատոր	b	-0.46			

նվազեցվել են հարկազատված ճյուղերի ավելացված արժեքները, համաձայն՝ ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի, մասնավորապես՝ ԱԱՀ վճարումից հարկազատված գյուղատնտեսության, ֆինանսական ոլորտ, կրթության, առողջապահության ոլորտներ, կացություն և հանրային սնունդ, մշակույթ, զվարճություններ և հանգիստ, ինչպես նաև գումարվել է ընթացիկ հաշվի բացասական հաշվեմնացորդը, այն տրամաբանությամբ, որ ներմուծումը ևս հանդիսանում է ԱԱՀ հարկման արտաքին բազա: Չուգահեռաբար, ՀՕ 62-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին համահունչ, հարկման բազային է գումարվել նաև հավաքագրված ակցիզային հարկի գումարները [19]:

Եթե դիտարկենք սույն վերլուծության ամփոփ արդյունքները, ապա կարելի է նկատել, որ ՀՀ տնտեսությունում առկա բյուջետային սահմանափակումները, ինչպես նաև հարկային ճեղքի մակարդակը թույլ են տալիս ներդնել ԱԱՀ հետվերադարձի մեխանիզմ՝ հարկային ճեղքի 10%-ով և ավելի կրճատման սցենարների պարագայում (գրոյական ֆիսկալ ազդեցություն կարելի է ստանալ նվազագույնը 5%-ով հարկային ճեղքի կրճատման պարագայում): Մաս-

նավորապես՝ կարելի է նկատել, որ հետվերադարձի դրույքաչափը դիտարկված սցենարներում կարող է սահմանվել 3-8% միջակայքում՝ կախված սույն միջոցառման արդյունքում հարկային ճեղքի կրճատման տեմպերից: Բնականաբար՝ հարկային ճեղքի կրճատման տեմպը ուղիղ համեմատական է ֆիսկալ տարածքին և հնարավորություն կտա ավելացնել ինչպես հետվերադարձի դրույքաչափը, այնպես էլ առավելագույն սպառման սահմանաչափը:

Աղյուսակ 3. Հետվճարի ներդրման հնարավոր ազդեցությունների սիմուլյացիոն վերլուծության ամփոփ արդյունքներ

Ամփոփ գնահատականներ				
	Սցենար 1	Սցենար 2	Սցենար 3	Սցենար 4
Հետվերադարձի սահմանաչափ	75000	75000	75000	75000
Հետվերադարձի տոկոս	4%	4%	4%	4%
ԱԱՀ դրույքաչափի աճ	0%	0%	0%	0%
Զուտ ֆիսկալ էֆեկտ առանց վարքագծային էֆեկտների (մլրդ դրամ)	-78.9	-78.9	-78.9	-78.9
ԱԱՀ հարկային ճեղք (մլրդ դրամ)	413.9	413.9	413.9	413.9
ԱԱՀ հարկային ճեղքի բազայի կշիռ պոտենցիալ հարկային բազայի նկատմամբ (ստվերի փոփոխմանը համահունչ)	0%	10%	20%	30%
ԱԱՀ հարկային ճեղքի կրճատում ԱԱՀ վերադարձից (ենթադրություն)	0.0	41.4	82.8	124.2
Զուտ ֆիսկալ էֆեկտ ներառյալ վարքագծային ազդեցությունները և ստվերի կրճատումը (մլրդ դրամ)	-46.6	-11.1	24.3	59.8
Զուտ ֆիսկալ էֆեկտը գրոյացնող հետվերադարձի դրույքաչափ	0%	3%	6%	8%
Առավելագույն հետվերադարձ (դրամ)	0	2250	4500	6000

Աղյուսակը կազմվել է հեղինակի հաշվարկների հիման վրա:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը և ՀՀ օրինակով սիմուլյացիոն վերլուծությունները փաստում են, որ պետության կողմից անկանխիկ գործարքներից հետվերադարձի կիրառումը, մեր կարծիքով, պետք է հիմնվի հետևյալ երեք սկզբունքների վրա՝

- ✓ որոշակի ժամկետայնությամբ սահմանափակում,
- ✓ անձի հաշվով վերադարձի առավելագույն չափի սահմանափակում
- ✓ հասցեական նպատակի առկայություն (օրինակ՝ ստվերի կրճատում, վերաբաշխողական քաղաքականություն, փոքր բիզնեսի աջակցություն, ազգային վճարահաշվարկային համակարգի խթանում և թվայնացում):

Այս ամենը հնարավորություն կտա կառավարելի դարձնել և հաշվեկշռել հնարավոր քաղաքականության միջոցառման հնարավոր օգուտները և ռիսկերը:

Եզրակացություն

➤ Հաշվի առնելով հնարավոր ռիսկերն ու սահմանափակումները՝ վերլուծության արդյունքները փաստում են, որ հետվերադարձի

և սպառման շեմային մեծության կիրառման արդյունքում հնարավոր է ունենալ **ֆիսկալ դրական զուտ էֆեկտ**, նույնիսկ **հարկային դրույքաչափերի անփոփոխության պայմաններում**: Այս գործողությունների համախումբն այնուամենայնիվ պետք է զուգակցվի հարկային ճեղքի որոշակի՝ առնվազն 5%-ով կրճատմամբ:

➤ Գործարքներից հետվերադարձի տրամադրումը նվազագույն սպառողական զամբյուղի չափով հնարավորություն կտա թիրախավորել սոցիալապես խոցելի խավերին՝ **նվազեցնելով հարկային արդյունավետ դրույքաչափը** սպառման ցածր մակարդակ ունեցող հասարակության շերտերում:

➤ Սա հնարավորություն կտա համալրել քաղաքականության մեխանիզմները **ներառական հարկաբյուջետային քաղաքականության** հերթական գործիքով, որը այլընտրանք կարող է հանդիսանալ օրինակ՝ սոցիալապես խոցելի խավերի սպառմանն աջակցելու նպատակով ԱԱՀ դրույքաչափի՝ առանձին սպրանքախմբերի պարագայում դիֆերենցման կամ ուղղակի ապրանքային տրանսֆերտների տրա-

մադրման քաղաքականության միջոցառումներին:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Chen, Y.-Y.** (2022). Understanding the Acceptance Intention for Consumers toward Using E-VAT (Value-Added Tax) Refund System. RA JOURNAL OF APPLIED RESEARCH, 08(11). <https://doi.org/10.47191/rajar/v8i11.03>
2. **Hong Van and Kieu Oanh.** Electronic Value Added Tax Refund: A new move towards the transparency of the tax sector. <https://english.haiquanonline.com.vn/electronic-value-added-tax-refund-a-new-move-towards-the-transparency-of-the-tax-sector-3874.html>
3. **van Ordt, Marius,** (2021). VAT Refunds in Developing Countries. Available at SSRN: <https://ssrn.com/abstract=3899056> or <http://dx.doi.org/10.2139/ssrn.3899056>
4. **Madzharova, B.** (2020). Traceable Payments and VAT Design: Effects on VAT Performance. CESifo Economic Studies, 66(3), 221–247. <https://doi.org/10.1093/cesifo/ifaa003>
5. https://bqk-kos.org/wp-content/uploads/2024/03/Snezana-Sofijanic_Visa-Meeting-of-the-National-Payments-Council-of-Kosovo-January-31-2024.pdf
6. <https://www.medianama.com/2018/08/223-gst-council-approves-20-cashback-for-payments-via-rupay-bhim-app/>
7. <https://www.thebanker.com/Japan-seeks-to-shake-off-cash-1627897177#:~:text=The%20Japanese%20government%20tried%20to,codes%20made%20in%20smaller%20businesses.>
8. <https://2c2p.com/blog/hong-kong-payment-methods>
9. <https://www.mof.gov.my/portal/arkib/press/MR2020/Jan/mr140120.pdf>
10. <https://en.yna.co.kr/view/AEN20210927002900320>
11. <https://www.evolutionadvisers.com.au/news-blog/2021/4/9/nsw-dine-and-discover-vouchers>
12. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2024թ. հունվար-դեկտեմբերին» ՀՀ ՎԿ վիճակագրական ժողովածու, էջ 324
https://armstat.am/file/article/sv_12_24a_6200.pdf
13. “The global payments report”, Worldpay LLC, 2024, p.51. https://offers.worldpayglobal.com/rs/850-JOA-856/images/TheGlobalPaymentsReport2024.pdf?_gl=1*159x2vt*_gcl_au*MTU3Nzg3MDgyNC4xNzlwMTg4NDcw*_ga*NDc2NDgzMjE3E3MjAxODg0NzA.*_ga_9HB8S1WFYN*MTcyMDE4ODQ2OS4xLjEuMTcyMDE4ODU4Ny4wLjAuMA..
14. <https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb>
15. “The Ararat Fiscal Strategy Model: A Structural Framework for Fiscal Policy Analysis in Armenia”, International Monetary Fund, WP/22/118, 2022, pp.17-22.
<https://www.elibrary.imf.org/view/journals/001/2022/118/article-A001-en.xml>
16. <https://www.cba.am/am/SitePages/pperiodicals.aspx>
17. <https://armstat.am/am/?nid=82>
18. https://www.src.am/am/taxStatisticsPage?id=127&selected_type=2&selected_date=%D4%B8%D5%B6%D5%A9%D5%A1%D6%81%D5%AB%D5%AF
19. <https://www.irtek.am/views/act.aspx?aid=150068>

Сдана/Հանձնվել է՝ 06.03.2025
Рецензирована/Գրախոսվել է՝ 13.03.2025
Принята/Ընդունվել է՝ 20.03.2025